

## Հուշ երեկո և ջահերով երթ՝ Եղեգնաձորում

24.04.2015



Ապրիլի 23-ին Վայոց ձորի մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքի մարզային մշակույթի կենտրոնի համերգային մեծ դահլիճում կայացավ Հայոց ցեղասպանության Մուրբ նահատակների հիշատակին նվիրված հուշ երեկո, որին մասնակցում էին մարզպետի տեղակալներ Սամվել Թարվերդյանը, Մելս Հարությունյանը, խորհրդական Վասիլ Ասլանյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Կամո Սահակյանը և այլ պաշտոնյաներ, ՀՀ ԳՄ մարզային ծառայությունների ղեկավարներ, ուսուցիչներ, ուսանողներ, աշակերտներ:

Երեկոյի ավարտից հետո կազմակերպվեց ջահերով երթ՝ դեպի Հայոց ցեղասպանության Մուրբ նահատակների հիշատակը հավերժացնող խաչքար, որին մասնակցում էին երիտասարդներ և հասարակական ակտիվիստներ: